Արձանագրություն N 3

«ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-25/44» ծածկագրով գնանշման հարցման մրցույթ ընթացակարգով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Բյուրեղավան 28 հունիս 2025թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Հովսեփյան
Հանձնաժողովի անդամներ Ս. Ղազարյան, Ա. Իգիթյան, Ա. Պողոսյան, Ա. Մանվելյան
Հանձնաժողովի քարտուղար Վ. Մարտիրոսյան

1 Թերի փաստաթղթերի լրացման մասին
(Տ. Հովսեփյան)

1.1 ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-25/44 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Տ. Հովսեփյանը տեղեկացրեց, որ «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն սահմանված կարգով ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը (մասնակցության դիմում հայտարարությունը):
1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀ Կառավարության 2017 թվականի 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:
Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 դեմ – 0

2. «ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-25/44» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու որոշում ընդունելու մասին
(Տ.Հովսեփյան)

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

2.2 ՀՀ գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն հանձնաժողովը որոշեց « ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-25/44» ծածկագրով գնանշման հարցման անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:
2.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 50 շենքի հարակից տարածքում, 11, 26 և 34 շենքերի հարակից տարածքում խաղահրապարակների կառուցման աշխատանքների ձեռքբերման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 դեմ – 0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝ _____ ***Տիգրան Հովսեփյան***

Անդամներ՝ _____ ***Սարգիս Ղազարյան***

_____ ***Անի Իգիթյան***

_____ ***Աշոտ Պողոսյան***

_____ ***Աշոտ Մանվելյան***

Քարտուղար՝ _____ ***Վարուժան Մարտիրոսյան***